

որ հիմքը կը կազմէ իրենց բոլջեւիկեան Ռուսաստանի օրինատացիային :

Արտասահմանի հայութիւնը վայելելով խօսքի եւ մամուլի ազատութիւնը, համեմատաբար աւելի պարզորոշ կը դնէ հարցերը եւ կուտայ իր լուսաբանութիւնները :

Սորհրդային Հայաստանի վարիչներու դիւանագիտական «խորութիւնը» հասած է այն աստիճանին, որ թուրքերն իսկ հաւատացած են, թէ հայ բոլջեւիկներու վարչաձեւի տեսականութիւնը երաշխիք մըն է հայ-թրքական բարեկամութեան եւ թէ՛ Գաշնակներու կոմիտէի վերադարձը պիտի նշանակէր նոր յարձակում մը «յեղափոխական» թուրքիոյ վրայ :

Այս բոլորը, ըստ բոլջեւիկեան արտասահմանի ներկայացուցիչներու եւ բոլջեւիկեան թմուրը զարկող Ռամկալարներու, պարզ դիւանագիտութիւն մըն է թուրքը հանդարտ պահելու համար: Բոլջեւիկներու յայտարարութիւնները իրենց բուն նպատակը քողարկելու համար է. Ռուսաստանը պիտի հասնի իր վերջնական նպատակին, թուրքիան խորհրդայնացնելով պիտի միացնէ իրեն. ու հայ բոլջեւիկներն օգտուելով ուսական կարմիր դէմքէն, պիտի ընդարձակեն Հայաստանը, եւ պիտի իրադրուեն հայահաւաքման գործը :

Արեւմտեան, հայկական դիւանագիտական միտքը համոզուած է, թէ կարող է այդ մարզին մէջ այն աստիճանի դերասանութիւն ընել, որ քուրքը խարուի, իսկ հայ զանդուածները հրաշագործ իմացականութեամբ մը ալդրան զազանի իրողութիւն մը պիտի գիտնան, անով պիտի ապրին, պիտի կազմակերպուին եւ պատրաստ պիտի դառնան այդ դերադրոյն ժամին՝ պատմական իրենց գերը կատարելու :

Անշուշտ այս պարզամտութիւնը անճար հոսանքներու եւ բոլջեւիկեան ներկայացուցիչներու ինքնախարեւոթիւնն է, եւ միայն պրոպականդային նշանակութիւն ունի :

IV

Պատմական տուեալներէ եւ մեր օրերու անվիճելի փաստերէն ելնելով, հայ ժողովուրդի բացարձակ մեծամասնութիւնը ուսական (բոլջեւիկ) օրինատացիա չունի եւ իր փրկութիւնը չէ կապած բոլջեւիկեան շարժումներուն : Հայութեան մեծամասնութեան այս քա-

ղաքականութիւնը ձեւակերպուած է Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ, որպէս հայութեան ամենէն ուժեղ քաղաքական կուսակցութեան :

Կ'արժէ հակադրել այն հիմնական պատճառաբանութիւնները, որ հայութիւնը կը հեռացնեն բոլջեւիկեան Ռուսաստանի օրինատացիայէն :

Դաշնակցական մամուլի մէջ յայնօրէն պարզաբանուած է Հայաստանի սահմաններու ընդարձակման եւ կողկասեան Հայաստանի քանի մը նահանգներու ներկայ Հայաստանին կցելու խնդիրները, եւ Ռուսաստանի կամ բոլջեւիկեան կուսակցութեան անբարեացակամութիւնը : Փաստաթղթերով, Սորհրդային Ռուսաստանի պաշտօնական յայտարարութիւններով եւ ընդարձակ յօդուածներով ապացուցուած է ուս-թրքական «բարեկամութիւն»ը, որ իրական կամ «չարակամ», անցնող տասնամեակի ընթացքին, հայ ժողովուրդին եւ Հայաստանին վնասած է :

Այս վերջին 7-8 տարուան Դաշնակցական քաղաքական գրականութեան մէջ մանրամասնօրէն պարզաբանուած են այն անդամանելի վնասները, որ հայ վերածնունդ հայրենիքը կը բեց բոլջեւիկեան Ռուսաստանի ընթացքէն : Այսօր, ամենէն ահա մտածողն իսկ զխէ, որ Միացեալ եւ Անկախ Հայաստանի չկազմուելու գլխաւոր պատճառը բոլջեւիկեան Ռուսաստանն եղաւ, որ աջակցեց ճգնուած թուրքիոյ՝ ոտքի կանգնելու, եւ ի վերջոյ որպէս Ռուսաստանի դաշնակիցն ու բարեկամը ջլատեց Հայաստանի Հանրապետութիւնը :

Թուրքերը լաւ դասեր առած էին ուս եւ հայ բոլջեւիկներէն. անոնք կը յայտարարէին թէ կը ճգնեն հայկական իմպերալիզմը, որ անգլիական իմպերալիզմի դաշնակիցն է, ինչ որ չեն կարող ըսել թուրքերն ու բոլջեւիկները, որոնք անբացատրելի եղբայրակցութիւն մը ունին, որ թերեւս կուզայ թաթարական արիւնէն...

Բոլջեւիկեան Ռուսաստանի տասնամեակը բոլորած է : Տասը տարուան տուեալներէն հայ ժողովուրդը միայն թշնամութիւն եւ վնաս կրած է : Հայ ժողովուրդի քաղաքական վերածնունդը խափանած է, Հայաստանի հողերը ուրիշներու ձեռքի մէջ կը մնան եւ ներկայ